Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն
2026, Vol. 17, No. 3(51), նոյեմբեր, 30-40
https://doi.org/10.46991/BYSU.E/2026.17.3.030

ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԹՎԱՅԻՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

ՂԱԶԱՐ ԱՎԵՏԻՍՅԱՆ*
Երևանի պետական համալսարան

Հոդվածում վերլուծվում է մարդու ազատ ընտրության հիմնախնդիրը թվայնացված հասարակության պայմաններում, որտեղ ալգորիթմական համակարգերը աստիճանաբար ներթափանցում են տեղեկատվության, սպառման, հաղորդակցության և առօրյա որոշումների կայացման գրեթե բոլոր ոլորտները: Հիմնական ուշադրությունը դարձվում է ժամանակակից ազատության պարադոքսալ բնույթին. մի կողմից՝ մարդն ունի ընտրության աննախադեպ մեծ թվով հնարավորություններ, իսկ մյուս կողմից՝ գնալով ավելի քիչ վերահսկողություն ունի այն տեղեկատվական և սոցիալական պայմանների նկատմամբ, որոնց շրջանակում ձևավորվում են իր նախասիրությունները և որոշումները: Այս համատեքստում վերլուծվում են ազատության և ինքնավարության դասական փիլիսոփայական ըմբռնումները, ընտրության ճարտարապետության, ֆիլտրային պղպջակի, վերահսկողական կապիտալիզմի հասկացությունները: Ջ. Ս. Միլի, Ի. Բեռլինի, Մ. Ֆուկոյի, Է. Պարիզերի, Շ. Զուբոֆի և այլ հեղինակների մոտեցումների համադրության միջոցով հիմնավորվում է այն դրույթը, որ ալգորիթմական համակարգերը պարտադիր չէ, որ սահմանափակեն ազատությունը ուղղակի հարկադրանքի միջոցով: Թաքնված սահմանափակումը կարող է առաջանալ այն ժամանակ, երբ ալգորիթմներն անտեսանելի կերպով ձևավորում են ընտրության միջավայրը, ընտրում են տեղեկատվության հոսքը, կանխատեսում են մարդու վարքագիծը և որոշ դեպքերում փորձում են փոփոխել այն: Արդյունքում առաջանում է ազատության պարադոքս. մարդը կարող է իրեն առավել ազատ զգալ հենց այն ժամանակ, երբ իր ընտրության ձևավորման պայմանները դառնում են ավելի քիչ թափանցիկ:

Բանալի բառեր - *ազատություն, ազատ ընտրություն, ինքնավարություն, ալգորիթմներ, թվային հասարակություն, վերահսկողական կապիտալիզմ, ֆիլտրային պղպջակ*

* **Ղազար Ավետիսյան** – փիլիսոփայական գիտությունների թեկնածու, ԵՊՀ սոցիալական փիլիսոփայության, բարոյագիտության և գեղագիտության ամբիոնի դոցենտ
Казар Аветисян – кандидат философских наук, доцент кафедры социальной философии, этики и эстетики ЕГУ
Ghazar Avetisyan – Candidate of Philosophical Sciences, Associate Professor at YSU Chair of Social Philosophy, Ethics and Aesthetics.
Էլ. փոստ՝ ghazar.avetisyan@ysu.am ORCID: https://orcid.org/0009-0005-4301-1935

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 16.09.2026
Գրախոսվել է՝ 17.09.2026
Հաստատվել է՝ 03.11.2026
© The Author(s) 2026

Մարդու ազատության խնդիրը փիլիսոփայության հիմնական և մշտապես արդիական խնդիրներից է: Չնայած խնդրի բազմադարյա պատմությանը՝ ազատության հարցը շարունակում է պահպանել իր արդիականությունը, քանի որ մարդու վարքի, գիտակցության և որոշումների կայացման դետերմինանտների վերաբերյալ ժամանակակից գիտական պատկերացումները ստիպում են նորովի իմաստավորել ազատ կամքի հնարավորության հարցը: Մարդու կյանքի գրեթե յուրաքանչյուր փուլ ուղեկցվում է ընտրության անհրաժեշտությամբ. մենք որոշումներ ենք կայացնում, գնահատում մեր և ուրիշների գործողությունները և այդ գործողությունների համար պատասխանատվություն վերագրում դրանց հեղինակներին: Սակայն որքան բնական է թվում ազատ ընտրության գաղափարը, այնքան բարդ է փիլիսոփայության տեսանկյունից այն հիմնավորել: Ազատության խնդիրն արդիական է հատկապես այսօր՝ թվային աշխարհում, որտեղ ալգորիթմներն ու արհեստական ինտելեկտի համակարգերը գնալով ավելի մեծ ազդեցություն են ունենում մարդու տեղեկատվության, նախասիրությունների և որոշումների վրա, ազատության և ինքնուրույն ընտրության խնդիրը ձեռք է բերում նոր և առավել բարդ նշանակություն:

Ազատությունը կապված է մի շարք հասկացությունների հետ, որոնց հիման վրա էլ ձևավորվում են խնդրի վերաբերյալ հիմնական մոտեցումները և ուղղությունները, մասնավորապես ազատության և անհրաժեշտության հակադրությունը: Եթե մարդու բոլոր գործողությունները պայմանավորված են ժառանգականությամբ, միջավայրով, դաստիարակությամբ, հասարակական պայմաններով, ուղեղի գործընթացներով և նախորդող պատճառներով, ապա հարց է առաջանում՝ արդյո՞ք մարդն իրականում ազատ է: Այստեղ ձևավորվում են դետերմինիզմը, ինդետերմինիզմը և դրանց համադրությունից՝ կոմպատիբիլիզմը:

Դետերմինիզմի համաձայն՝ մարդն իրեն ազատ է համարում, քանի որ չի գիտակցում իր գործողությունները պայմանավորող պատճառները: Իրականում բնության մեջ ամեն ինչ, այդ թվում՝ մարդու ցանկություններն ու որոշումները, ենթարկվում են անհրաժեշտությանը, ազատ է այն, ինչը գոյություն ունի միայն իր բնության անհրաժեշտությամբ[1]:

Ինդետերմինիզմի ներկայացուցիչները պնդում են հակառակը՝ համարելով, որ աշխարհի ընթացքը լիովին կանխորոշված չէ, և մարդն ունի իրական այլընտրանքային հնարավորություններ, հետևաբար նաև՝ ազատ կամք[2]:

Ըստ համադրական մոտեցման՝ ազատությունն ու պատճառական անհրաժեշտությունը միմյանց չեն բացառում: Մարդն ազատ է, երբ գործում է ըստ իր ցանկությունների և կամքի, այլ ոչ թե արտաքին հարկադրանքի դրդմամբ: Այ-

---

[1] Տե՛ս **Спиноза Б.**, Этика, Мн.: Харвест, М.: АСТ, 2001, էջ 4:

[2] Տե՛ս **W. James,** *The Will to Believe and Other Essays in Popular Philosophy.* Cambridge: Cambridge University Press, 2014, էջ 176-177:

սինքն, ազատությունն ու անհրաժեշտությունը միմյանց չեն հակասում. մարդը ազատ է այն դեպքում, երբ կարող է գործել իր կամքին և ցանկություններին համապատասխան, եթե նույնիսկ այդ կամքն ու գործողությունները պատճառավորված են[3]:

Մարդու ազատությունը անմիջականորեն կապված է կամքի և ընտրության խնդրի հետ: Եթե մարդը կարող է գիտակցված ընտրություն կատարել տարբեր հնարավորություններից, ապա կարելի է խոսել ազատ կամքի մասին: Բայց եթե ընտրությունն ամբողջությամբ պայմանավորված է պատճառներով, հարց է առաջանում՝ որքանո՞վ է այն իսկապես **իր** ընտրությունը: Տեղին է հիշել Ի. Կանտի մոտեցումը ազատության, ազատ կամքի և բարոյականության կապի վերաբերյալ: Ըստ նրա՝ իրական ազատության մասին կարելի է խոսել միայն այն դեպքում, երբ մարդը կարող է իր կամքը ձևավորել ինքնուրույն՝ բանականության և բարոյական սկզբունքների հիման վրա, այլ ոչ թե կուրորեն ենթարկվել արտաքին ազդեցություններին կամ սեփական պատահական ցանկություններին: Այսինքն՝ ազատությունն ու ինքնավարությունը նույնական են: Մարդն ինքն է իր համար սահմանում այն բարոյական օրենքը, որին հետևում է: Այդ պատճառով էլ ազատ կամքը, ըստ Կանտի, անմիջականորեն կապված է բարոյական պատասխանատվության հետ. եթե մարդը ազատ չէ, նրան բարոյապես պատասխանատու համարելը դժվար է[4]:

Ժամանակակից աշխարհում, տեխնոլոգիաների զարգացման, մասնավորապես՝ համացանցում ալգորիթմների առկայության համատեքստում ազատության խնդիրը նոր նրբերանգ է ստանում: Եթե ալգորիթմները կարողանում են կանխատեսել մարդու վարքը, ձևավորել նրա տեղեկատվական միջավայրը, ազդել նախասիրությունների և որոշումների վրա, ապա առաջանում է նոր հարց. **արդյո՞ք մարդը շարունակում է ազատ լինել, երբ նրա ընտրությունների պայմաններն անտեսանելիորեն ձևավորում են ալգորիթմները**:

Ժամանակակից մարդն առաջին հայացքից ունի ընտրության ավելի մեծ հնարավորություններ: Նա կարող է ընտրել հազարավոր ապրանքների, ֆիլմերի, երաժշտական ստեղծագործությունների, լրատվական, կրթական նյութերի, սոցիալական կապերի զանազան ձևերի միջև: Համացանցն ընդլայնել է մարդու հասանելիությունը տեղեկատվությանը՝ ստեղծելով ընտրության անսահման հորիզոնի տպավորություն: Սակայն **ընտրության հնարավորությունների աճը միշտ չէ, որ ենթադրում է ընտրության ազատության աճ:** Մարդը կարող է ունենալ միլիոնավոր հնարավորություններ, սակայն փաստացի հանդիպել դրանցից միայն մի փոքր մասին: Ավելին՝ այդ հնարավորությունները նրա առջև կարող են հայտնվել ոչ թե պատահականորեն, այլ որոշակի ալգորիթմական ընտրության արդյունքում: Որոնման համակարգը որոշում է՝ ո՛ր արդյունքը ցույց տալ առաջինը, սոցիալական ցանցը՝ ո՛ր հրապարակումը

[3] Տե՛ս **Юм Д.,** Сочинения в 2 томах. Т. 2. М., Мысль, 1996**,** էջ 79-80:
[4] Տե՛ս **Кант И.**, Сочинения: в 6 т. Т. 4, ч. 1., М., Мысль, 1965, էջ 290:

տեղադրել լրահոսի սկզբում, տեսանյութային հարթակը՝ ո՛ր տեսանյութը առաջարկել հաջորդը, իսկ առցանց խանութը՝ ո՛ր ապրանքը ներկայացնել որպես կոնկրետ անհատին առավել համապատասխան:

Ջ. Ս. Միլի ազատության մասին ուսմունքում անհատի ազատության կարևոր պայմաններից մեկը ուրիշների և հասարակության չարդարացված միջամտությունից պաշտպանված լինելու հնարավորությունն է: Միլը պաշտպանում է անհատի՝ սեփական կյանքի ձևը որոշելու, սեփական կարծիքներն ունենալու և սեփական ընտրությունները կատարելու իրավունքը[5]: Այս մոտեցման համաձայն՝ ազատությունը մեծապես կապված է արտաքին հարկադրանքի բացակայության հետ:

Սակայն թվային միջավայրում այս դասական պատկերացումը թերի է: Եթե ոչ ոք մարդուն չի ստիպում գնել որևէ ապրանք, դիտել որևէ տեսանյութ կամ ընդունել որևէ տեսակետ, կարելի է ասել, որ արտաքին հարկադրանք չկա: Բայց արդյո՞ք դրանից հետևում է, որ ընտրությունը լիովին ինքնավար է:

Այս կապակցությամբ կարևոր է բացասական և դրական ազատությունների տարբերակումը: Բացասական ազատությունը վերաբերում է այն տարածքին, որտեղ մարդը կարող է գործել առանց արտաքին միջամտության, մինչդեռ դրական ազատությունը կապված է այն հարցի հետ, թե ով է իրականում ղեկավարում մարդու գործողությունները, և արդյո՞ք մարդը կարող է իրեն ընկալել որպես սեփական կյանքի ինքնուրույն հեղինակ[6]: Այս տարբերակումը հնարավորություն է տալիս թվային միջավայրի խնդիրը դիտարկել ոչ միայն որպես արտաքին սահմանափակման, այլև որպես ինքնավարության խնդիր, որի հետ անմիջականորեն առնչվում է Ռ. Թալերի և Կ. Սանսթեյնի մշակած «ընտրության ճարտարապետության» (*choice architecture*) գաղափարը: Ըստ նրանց մոտեցման՝ մարդու ընտրության միջավայրը երբեք ամբողջովին չեզոք չէ: Առաջարկվող տարբերակների դասավորվածությունը, հերթականությունը, թաքնված առաջարկները, գովազդները կարող են ազդել մարդու որոշումների վրա[7]: Իրականացվում է «փափուկ ուղղորդում», որի սկզբունքային առանձնահատկությունն այն է, որ այն չի վերացնում ընտրության հնարավորությունը: Մարդը շարունակում է ունենալ իր ընտրության իրավունքը, սակայն ընտրության պայմաններն այնպես են կազմակերպվում, որ հնարավոր է դառնում կանխատեսել մարդու վարքագիծը և հետագայում առաջարկել այդ վարքագծին հարմարեցված տարբերակներ: Այսպիսով, մարդու ընտրությունն

---

[5] Տե՛ս **Mill, J. S.,** *On Liberty.* Ed. and intro. Gertrude Himmelfarb. London: Penguin Classics, 2003, էջ 16:

[6] Տե՛ս **Berlin, Isaiah**, “Two Concepts of Liberty.” In: *Four Essays on Liberty*. Oxford: Oxford University Press, 1969, էջ 120–123:

[7] Տե՛ս **Талер Р., Санстейн К.,** *Nudge. Архитектура выбора. Как улучшить наши решения о здоровье, благосостоянии и счастье.* М., Манн, Иванов и Фербер, 2017, էջ 81:

ու նախասիրությունները դառնում են կանխատեսելի, իսկ վարքի որոշակի ձևերը՝ ավելի հավանական[8]:

Այս գաղափարը հատկապես հետաքրքիր է դառնում թվային միջավայրում: Եթե ավանդական խանութում ապրանքների դասավորությունը կարող է ազդել գնորդի ընտրության վրա, ապա թվային հարթակում ընտրության ճարտարապետությունը կարող է լինել ոչ միայն կազմակերպված, այլև **անհատականացված**: Ֆիզիկական խանութի դարակը հիմնականում նույնն է բոլոր գնորդների համար: Ալգորիթմական միջավայրը, ընդհակառակը, կարող է տարբեր լինել յուրաքանչյուր օգտագործողի համար: Միևնույն որոնման հարցը տարբեր մարդկանց համար կարող է առաջացնել տարբեր արդյունքներ: Միևնույն սոցիալական ցանցը տարբեր օգտատերերի կարող է ցույց տալ տարբեր տեղեկատվական հոսքեր: Միևնույն առցանց խանութը կարող է տարբեր մարդկանց ներկայացնել տարբեր ապրանքներ: Այսպիսով, թվային ընտրության ճարտարապետությունը դառնում է ոչ միայն **միջավայրի կազմակերպում**, այլև **միջավայրի անհատականացում**, որի կարևորագույն հետևանքներից մեկն այն է, որ մարդը սկսում է ընտրել ոչ թե ամբողջ հնարավորությունների միջից, այլ այն հնարավորությունների միջից, որոնք հայտնվում են իր անհատականացված տեղեկատվական միջավայրում: Այս երևույթը բնութագրում է «ֆիլտրային պղպջակի» (*filter bubble*) հասկացությամբ, որի կապակցությամբ հիմնական մտահոգությունն այն է, որ համացանցային տեղեկատվական տարածությունը, որը սկզբնապես ընկալվում էր որպես ազատ և բաց, աստիճանաբար դառնում է անհատականացված: Ալգորիթմները փորձում են որոշել, թե որ տեղեկատվությունն է տվյալ օգտագործողի համար առավել «համապատասխան»՝ հաշվի առնելով նրա նախկին որոնումները, հետաքրքրությունները և վարքագիծը[9]: Այս երևույթն առաջին հերթին սահմանափակում է ոչ թե ընտրությունը, այլ **ընտրության նախադրյալը՝ տեսանելիությունը**: Մարդը չի կարող ընտրել այն, ինչի գոյության մասին չգիտի: Եթե որևէ տեղեկատվություն երբեք չի հայտնվում մարդու տեղեկատվական դաշտում, ապա նրա կողմից այդ տեղեկատվությունը չընտրելը չի կարող ամբողջությամբ մեկնաբանվել որպես գիտակցված մերժում: Նա պարզապես չի ունեցել այն ընտրելու հնարավորություն:

Այս տեսանկյունից կարելի է տարբերակել ընտրության երկու մակարդակ: *Առաջին* մակարդակում մարդը ընտրում է իրեն ներկայացված տարբերակների միջև: Երկրորդ մակարդակում հարց է առաջանում, թե ով կամ ինչն է որոշում, թե **ինչ տարբերակներ են նրան ներկայացվելու**: Առաջին մակարդակում մարդը կարող է լինել ազատ: *Երկրորդում* նրա ինքնավարությունը կարող է

---

[8] Տե՛ս նույն տեղում, էջ 18:

[9] Տե՛ս **Паризер Э.,** *За стеной фильтров. Что Интернет скрывает от вас?,* М., Альпина Бизнес Букс, 2012, էջ 18-20:

ավելի խնդրահարույց լինել: Նման տարբերակումը թույլ է տալիս ավելի ճշգրիտ ձևակերպել ալգորիթմական ազատության պարադոքսը. **մարդը կարող է ունենալ լիարժեք ազատություն ներկայացված տարբերակների միջև ընտրելու հարցում, բայց միաժամանակ սահմանափակ ինքնավարություն այն հարցում, թե ինչու են հենց այդ տարբերակները հայտնվել իր առջև:** Խնդիրն այլևս ոչ միայն տեղեկատվության հասանելիությունն է, այլև դրա **կառուցվածքը**:

Թվային հարթակներում օգտատերը չի կարող տեսնել «ողջ համացանցը»: Նա տեսնում է որոնման արդյունքների որոշակի դասավորվածություն, սոցիալական ցանցի որոշակի լրահոս, առաջարկվող տեսանյութերի որոշակի հաջորդականություն, ապրանքների որոշակի ընտրանի: Այսինքն ընտրությունը կատարվում է ալգորիթմական գործընթացների միջոցով, որոնք թաքնված են կամ առնվազն չեն ներկայացվում օգտատերերին: Արդյունքում, ինչպես ներկայացնում է Մ. Ֆուկոն, ի հայտ է գալիս կառավարման և վերահսկման կապի փոփոխությունը, որի պատճառով իշխանության մեխանիզմներն աստիճանաբար հեռանում են բացահայտ և ցուցադրական պատժից և ավելի ու ավելի են հիմնվում հսկողության, դիտարկման, նորմավորման և կարգապահության վրա: Ֆուկոյի վերլուծության առանցքային հասկացություններից է պանօպտիկոնը՝ Ջերեմի Բենթամի նախագծած բանտային կառուցվածքը, որտեղ հսկողության հնարավորությունը մշտապես առկա է, նույնիսկ եթե բանտարկյալը տվյալ պահին չգիտի՝ իրեն դիտարկո՞ւմ են, թե՞ ոչ[10]: Այս պայմաններում իշխանության արդյունավետությունը կախված չէ մշտական ֆիզիկական միջամտությունից, կարևորն այն է, որ դիտարկման հնարավորությունը ներառվում է հենց սուբյեկտի վարքագծի մեջ: Հետևաբար՝ իշխանությունը ոչ միայն արգելող ուժն է, այլև այն մեխանիզմն է, որը որոշակիորեն ձևավորում է բնական, ընդունելի կամ սպասելի վարքագծերը:

Թվային միջավայրում այս գաղափարը ստանում է նոր ձև: Թվային համակարգը ոչ միայն դիտարկում է մարդու վարքագիծը, այլև կարող է գրանցել որոնումները, սեղմումները, դիտման տևողությունը, նախասիրությունները, գնումները և բազմաթիվ այլ վարքային ազդանշաններ: Դասական պանօպտիկոնում սուբյեկտը գիտի, որ կարող է դիտարկվել: Թվային միջավայրում մարդը հաճախ չի պատկերացնում՝ **ինչ չափով է դիտարկվում, ինչ տվյալներ են հավաքվում, ինչ եզրակացություններ են արվում այդ տվյալներից, և ինչպես են այդ եզրակացությունները օգտագործվում նրա հետագա վարքագծի նկատմամբ**: Այսպիսով, հսկողությունը դառնում է ոչ միայն դիտարկում, այլև տվյալների հավաքում:

Ժամանակակից աշխարհում վերահսկողության և ազատության խնդիրը կապված է տնտեսական նոր տրամաբանության հետ, որի պայմաններում

---

[10] Տե՛ս **Фуко М.,** *Надзирать и наказывать: Рождение тюрьмы*, М.: Ad Marginem, 1999, էջ 286-287:

մարդկային փորձառությունը վերածվում է տվյալների, իսկ տվյալները՝ ապագա վարքագծի կանխատեսման և տնտեսական շահույթի աղբյուրի: Այս կապակցությամբ առաջ է քաշվել «վերահսկողական կապիտալիզմի» հայեցակարգը, որի միջոցով ժամանակակից թվային տնտեսության մոդելը, որտեղ մարդու առօրյա գործունեությունը՝ որոնումները, սոցիալական ցանցերի օգտագործումը, գնումները, տեղաշարժը և այլ թվային գործողություններ, վերածվում են արժեքավոր տվյալների[11]: Տեխնոլոգիական ընկերությունները այդ տվյալները հավաքում և վերլուծում են՝ մարդու վարքը կանխատեսելու, իսկ հետագայում նաև դրա վրա ազդեցություն գործելու նպատակով: Վերահսկողությունը դառնում է ոչ միայն դիտարկման, այլև տնտեսական շահագործման մեխանիզմ: Եթե Ֆուկոյի հայեցակարգում վերահսկողության արդյունավետությունը հիմնված է այն գիտակցության վրա, որ մարդը կարող է մշտապես դիտարկվել, ապա թվային միջավայրում վերահսկողությունն ավելի անտեսանելի է: Մարդը հաճախ նույնիսկ չի գիտակցում, թե իր վարքի որ մասն է վերածվում տվյալների, և ինչպես են դրանք օգտագործվում: Ավելին, նպատակը միայն մարդու մասին տեղեկություն ստանալը չէ, այլ նրա ապագա վարքը կանխատեսելն ու որոշակիորեն ուղղորդելը: Ուստի այս մոտեցումը կարելի է դիտարկել որպես Ֆուկոյի վերահսկողության գաղափարի ժամանակակից շարունակություն. պանօպտիկոնի դեպքում մարդը ենթադրում է, որ իրեն կարող են դիտարկել, իսկ թվային հասարակության դեպքում նա հաճախ ինքնակամ թողնում է իր մասին տվյալների հսկայական հետք՝ չտեսնելով այն վերահսկողության համակարգը, որի մեջ այդ տվյալները ներառվում են:

Եթե մարդու վարքագիծը հնարավոր է բավականաչափ ճշգրիտ կանխատեսել, ապա առաջանում է կանխատեսման տնտեսական արժեք: Բայց եթե հնարավոր է նաև ազդել այդ վարքագծի վրա, ապա առաջանում է մեկ այլ հնարավոր նպատակ՝ ոչ միայն կանխատեսել, թե ինչ կանի մարդը, այլև **մեծացնել որոշակի վարքագծի տեղի ունենալու հավանականությունը**: Այստեղ կանխատեսումը սկսում է վերածվել միջամտության: Վերահսկողական կապիտալիզմի տրամաբանության մեջ տվյալների հավաքումն ու վարքագծի կանխատեսումը կարող են միավորվել այնպիսի մեխանիզմների հետ, որոնք նպատակ ունեն ազդելու ապագա վարքագծի վրա: Այս հանգամանքը էական փոփոխություն է մտցնում ազատության խնդրի մեջ:

Մարդու ազատությունը չի ենթադրում, որ նրա յուրաքանչյուր գործողություն պետք է լինի ամբողջովին անկանխատեսելի: Մարդիկ կարող են սովորությունների, բնավորության, արժեքների և նախասիրությունների հիման վրա կանխատեսելի լինել: Խնդիրն առաջանում է այն ժամանակ, երբ ուրիշի կողմից մարդու վարքի կանխատեսելիությունը վերածվում է նրա վարքի ձևա-

[11] Տե՛ս **Zuboff Shoshana**, *The Age of Surveillance Capitalism: The Fight for a Human Future at the New Frontier of Power*. New York: PublicAffairs, 2019, էջ 14:

վորման նպատակային գործիքի: Սա թույլ է տալիս հասկանալ, թե ինչու ալգորիթմական ազդեցությունը չի կարելի նույնացնել սովորական գովազդի հետ:

Գովազդը վաղուց է փորձում ազդել մարդու ցանկությունների վրա, սակայն ավանդական գովազդը սովորաբար աշխատում էր ավելի ընդհանուր խմբերի, տարիքային կամ սոցիալական կատեգորիաների մակարդակում: Թվային միջավայրում ազդեցությունը դառնում է անհատականացված և շարունակական: Համակարգը կարող է ոչ միայն ներկայացնել գովազդը, այլև հետևել մարդու արձագանքին և դրա հիման վրա փոխել հաջորդ առաջարկը: Արձագանքը դառնում է նոր տվյալ՝ առաջացնելով նոր առաջարկ և այսպիսով ստեղծելով փակ շրջան:

Եթե ազատությունը հասկանում ենք միայն որպես ֆիզիկական կամ իրավական հարկադրանքի բացակայություն, ապա կարելի է ասել, որ մարդը շարունակում է ազատ մնալ: Նա կարող է փակել հավելվածը, չգնել ապրանքը, չդիտել տեսանյութը, չհետևել առաջարկությանը: Սակայն եթե ազատությունը ներառում է սեփական ցանկությունների և որոշումների ձևավորման նկատմամբ քննադատական վերահսկողություն, ապա իրավիճակը ավելի բարդ է: Ազատությունն ու ինքնավարությունը չեն սահմանափակվում այն փաստով, որ մարդը պարզապես գործում է իր ցանկությունների համաձայն: Ինքնավարության համար կարևոր է նաև այն, թե ինչպես է մարդը վերաբերվում իր ցանկություններին և արդյոք կարող է իրեն նույնականացնել դրանց հետ[12]:

Ալգորիթմական գործիքների կիրառման պայմաններում ազատության խնդիրը տեղափոխվում է գործողության մակարդակից դեպի **նախասիրությունների ձևավորման մակարդակ**, որտեղ առաջ է գալիս մեկ այլ կարևոր տարբերություն՝ համոզելու, մղելու, մանիպուլյացիայի և հարկադրանքի միջև: Հարկադրանքը նվազեցնում է ընտրության հնարավորությունը, համոզումը փորձում է փոխել մարդու համոզմունքը՝ նրան պատճառներ ներկայացնելով: Մղումը փոխում է ընտրության միջավայրը՝ պահպանելով այլընտրանքների ֆորմալ հասանելիությունը: Մանիպուլյացիան ավելի խնդրահարույց է, քանի որ այն կարող է թաքցնել ազդեցության իրական բնույթը և օգտագործել մարդու հոգեբանական առանձնահատկությունները նրա վարքագծի վրա ազդելու համար:

Ալգորիթմը կարող է պարզապես դասակարգել տեղեկատվությունը կամ օգնել մարդուն գտնելու իրեն անհրաժեշտ նյութը: Խնդիրը սկսվում է այն ժամանակ, երբ դասակարգման և անհատականացման մեխանիզմները միավորվում են տնտեսական կամ այլ շահերի հետ, որոնք կարող են ուղղված լինել ոչ թե մարդու ընտրությունը հեշտացնելուն, այլ նրա վարքագիծը կանխատեսելի և կառավարելի դարձնելուն: Այս պատճառով «անհատականացում» բառը

---

[12] Տե՛ս **Dworkin G.,** *The Theory and Practice of Autonomy.* Cambridge: Cambridge University Press, 1988, էջ 20:

ինքնին ո՛չ դրական է, ո՛չ բացասական: Անհատականացված ծառայությունը կարող է լինել օգտակար: Սակայն այն կարող է նաև սահմանափակել մարդու տեղեկատվական հորիզոնը: Կրկին վերադառնալով Փարիզերի «ֆիլտրային պղպջակին», եթե համակարգը անընդհատ առաջարկում է այն, ինչը համապատասխանում է մարդու նախկին նախասիրություններին, ապա այն ոչ միայն արձագանքում է նրա ընտրությանը, այլև կարող է ամրապնդել արդեն գոյություն ունեցող ընտրության օրինաչափությունները:

Եթե ազատությունը հասկանում ենք որպես ինքնուրույն մտածելու և ընտրելու կարողություն, ապա այն կարող ենք կապել անսպասելիության և այլընտրանքների հետ: Մարդը կարող է վերանայել իր տեսակետը միայն այն դեպքում, երբ հանդիպում է այնպիսի բանի, որը կարող է վիճարկել իր նախկին համոզմունքը: Եթե տեղեկատվական միջավայրը անընդհատ վերադարձնում է նրան այն, ինչն արդեն համապատասխանում է իր նախասիրություններին, ապա ընտրության թվային տարածքը կարող է ընդարձակ թվալ, մինչդեռ իրականում այն դառնում է ավելի **հոմոգեն**: Այստեղ է, որ տեղեկատվության բազմազանությունը դառնում է ազատության պայման: Այս դրույթը հատկապես կարևոր է ժողովրդավարական հասարակության համար: Քաղաքական ազատությունը ենթադրում է ոչ միայն սեփական կարծիքը արտահայտելու իրավունք, այլև այլ կարծիքների հետ հանդիպելու հնարավորություն: Եթե յուրաքանչյուր քաղաքացի ստանում է իր նախկին համոզմունքներին համապատասխանեցված տեղեկատվական հոսք, հասարակական տարածքը կարող է մասնատվել բազմաթիվ անհատականացված տեղեկատվական իրականությունների: Այդ դեպքում ալգորիթմը այլևս պարզապես տեղեկատվություն չի դասակարգում, այն մասնակցում է **հանրային իրականության կառուցմանը**:

Մարդը կարող է ունենալ ավելի շատ ընտրության տարբերակներ, բայց ավելի քիչ վերահսկողություն այն պայմանների նկատմամբ, որոնցում այդ տարբերակները դառնում են ընտրության առարկա: Այս պարադոքսը հատկապես սուր է սպառման ոլորտում: Ժամանակակից մարդը կարող է ընտրել հսկայական քանակությամբ ապրանքների և ծառայությունների միջև: Սակայն նրա սպառողական վարքագիծը նաև տվյալների աղբյուր է, որը կարող է օգտագործվել հետագա առաջարկությունների անհատականացման համար: Այսպիսով, նախորդ ընտրությունը դառնում է ապագա ընտրության պայման, առաջանում է մի հետաքրքիր շրջանաձևություն. **մարդու ընտրությունը ձևավորում է ալգորիթմական միջավայրը, իսկ ալգորիթմական միջավայրը հետագայում ձևավորում է մարդու ընտրությունը**: Հետևաբար, անհնար է ասել, որ ամբողջ ազդեցությունը գալիս է միայն համակարգից: Մարդը նույնպես մասնակցում է համակարգի ձևավորմանը՝ իր վարքագծով: Սակայն հենց այդ փոխադարձության մեջ էլ առաջանում է խնդիրը. համակարգը կարող է կուտակել և մշակել մարդու վարքագծի վերաբերյալ շատ ավելի մեծ քանակությամբ

տեղեկատվություն, քան անհատը կարող է հասկանալ համակարգի կողմից իր վարքագծի վերաբերյալ արված եզրակացությունները։

Ազատության պաշտպանությունը չի կարող սահմանափակվել միայն «ընտրելու իրավունքի» պաշտպանությամբ, անհրաժեշտ է պաշտպանել նաև **ընտրության պայմանների թափանցիկությունը**։ Սակայն, առաջանում է ևս մեկ խնդիր։ Ժամանակակից ալգորիթմական համակարգերը այնքան բարդ են, որ սովորական օգտագործողից պահանջել ամբողջությամբ հասկանալ դրանց աշխատանքը՝ իրատեսական չէ, հետևաբար՝ լուծումը չի կարող լինել այն, որ յուրաքանչյուր մարդ դառնա ալգորիթմների մասնագետ։ Ավելի նպատակահարմար է պահանջել այնպիսի սոցիալական, իրավական և ինստիտուցիոնալ պայմաններ, որոնցում մարդու վարքագծի վերաբերյալ տվյալների օգտագործումը չի կարող վերածվել նրա ինքնավարության անտեսանելի սահմանափակման։

Այս հարցի վերջնական լուծումը, բնականաբար, չի կարող տրվել միայն տեխնոլոգիայի քննադատությամբ։ Այն պահանջում է ազատության փիլիսոփայական ըմբռնման ընդլայնում։ Թվային հասարակությունում ազատ լինել նշանակում է ոչ միայն ունենալ ընտրելու հնարավորություն, այլև հնարավորինս պահպանել սեփական ընտրության ձևավորման նկատմամբ քննադատական վերահսկողությունը։

КАЗАР АВЕТИСЯН – ***Автономия выбора и проблема свободы в цифровую эпоху.–*** В статье рассматривается проблема свободы выбора человека в условиях цифровизированного общества, в котором алгоритмические системы постепенно проникают практически во все сферы информационного пространства, потребления, коммуникации и повседневного принятия решений. Основное внимание уделяется парадоксальному характеру свободы в современном мире: с одной стороны, человек располагает беспрецедентно широким спектром возможностей выбора, а с другой — имеет всё меньше контроля над информационными и социальными условиями, в рамках которых формируются его предпочтения и принимаются решения. В этом контексте анализируются классические философские трактовки свободы и автономии, а также концепции «архитектуры выбора», «фильтрующего пузыря» и «надзорного капитализма». На основе сопоставления подходов Дж. С. Милля, И. Берлина, М. Фуко, Э. Паризера, Ш. Зубофф и других авторов обосновывается положение о том, что алгоритмические системы не обязательно ограничивают свободу посредством прямого принуждения. Скрытое ограничение может возникать в тех случаях, когда алгоритмы незаметно формируют среду выбора, определяют информационные потоки, прогнозируют поведение человека и в некоторых случаях стремятся воздействовать на него и изменять его. В результате возникает парадокс свободы: человек может ощущать себя более свободным именно тогда, когда условия формирования его выбора становятся менее прозрачными.

Ключевые слова: *свобода, свобода выбора, автономия, алгоритмы, цифровое общество, надзорный капитализм, фильтрующий пузырь*

GHAZAR AVETISYAN – ***The Autonomy of Choice and the Problem of Freedom in the Digital Age.–*** The article examines the problem of human freedom of choice in the context of a digitalized society, where algorithmic systems are gradually penetrating almost every sphere of

information, consumption, communication, and everyday decision-making. Particular attention is paid to the paradoxical nature of freedom in the contemporary world: on the one hand, individuals have access to an unprecedented range of choices, while on the other, they have increasingly less control over the informational and social conditions within which their preferences and decisions are formed. Within this context, the article analyzes classical philosophical understandings of freedom and autonomy, as well as the concepts of "choice architecture," the "filter bubble," and "surveillance capitalism." By bringing together the approaches of J. S. Mill, I. Berlin, M. Foucault, E. Pariser, S. Zuboff, and other scholars, the article argues that algorithmic systems do not necessarily restrict freedom through direct coercion. Rather, hidden forms of constraint may emerge when algorithms invisibly shape the environment in which choices are made, determine the flow of information, predict human behavior, and, in some cases, seek to influence and modify it. This gives rise to a paradox of freedom: individuals may feel more free precisely at the moment when the conditions shaping their choices become less transparent.

Key words: *freedom, freedom of choice, autonomy, algorithms, digital society, surveillance capitalism, filter bubble*

Էթիկայի վերաբերյալ հայտարարություն
Հեղինակը հաստատում է, որ պահպանվել են հետազոտությանը վերաբերող էթիկական բոլոր պահանջները։

Շահերի բախման վերաբերյալ հայտարարություն
Հեղինակը հաստատում է, որ շահերի բախում առկա չէ։

Գրականության ցանկ / References

Кант И., Сочинения: в 6 т. Т. 4, ч. 1. — М.: Мысль, 1965. — 543 с.,/ Kant I., Sochineniya: v 6 t. T. 4, ch. 1. — M.: Mysl', 1965. — 543 s.,/

Паризер Э., *За стеной фильтров. Что Интернет скрывает от вас?,* М.: Альпина Бизнес Букс, 2012, 304 с. / Parizer E., Za stenoy fil'trov. Chto Internet skryvayet ot vas?, M.: Al'pina Biznes Buks, 2012, 304 s.

Спиноза Б., Этика. Мн.: Харвест, М.: АСТ, 2001. 336 с. /Spinoza B., Etika. Mn.: Kharvest, M.: AST, 2001. 336 s./

Талер Р., Санстейн К.*, Nudge. Архитектура выбора. Как улучшить наши решения о здоровье, благосостоянии и счастье,* М.: Манн, Иванов и Фербер, 2017. 240 с. / Taler R., Sansteyn K., Podtalkivaniye. Vybor arkhitektury. Kak uluchshit' nashi resheniya o zdorov'ye, blagososto yanii i schast'ye, M.: Mann, Ivanov i Ferber, 2017. 240 s.

Фуко М., *Надзирать и наказывать: Рождение тюрьмы*, М.: Ad Marginem, 1999. 478 с. / Fuko M., Nadzirat' i nakazyvat': Rozhdeniye tyur'my, M.: Ad Marginem, 1999. 478 s.

Юм Д., Сочинения в 2 томах. Т. 2. М.: Мысль, 1996, 806 с./ Yum D., Sochineniya v 2 tomakh. T. 2. M.: Mysl', 1996, 806 s./

Berlin, I. *Four Essays on Liberty.* Oxford: Oxford University Press, 1969, 213 p.

Dworkin, G. *The Theory and Practice of Autonomy.* Cambridge: Cambridge University Press, 1988, 173 p.

James, W. *The Will to Believe and Other Essays in Popular Philosophy. Cambridge:* Cambridge University Press, 2014, p. 151.

Mill, J. S., *On Liberty.* Ed. and intro. Gertrude Himmelfarb. London: Penguin Classics, 2003. 192 p.

Zuboff, Shoshana, *The Age of Surveillance Capitalism: The Fight for a Human Future at the New Frontier of Power.* New York: PublicAffairs, 2019, 478 p.